

## Մ Ա Ս Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

ՄԱՍԱԳ. — ՏԵԱՌՆԱԿԱՆ. — ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ. — ԶԱՏԿԻ  
ԳԱՌՆ. — ՀԱՅ ՄԱՍԱԳԸ ԶՈՀ ԷՐ

**Ը**նկերային ու կրօնական կենաց այլ եւ այլ պարագայից համեմատ՝ բոլոր ազգերու մէջ աւելի կամ պակաս կը փոփոխուէին ճաշի արարողութիւնք եւ կերակրոց տեսակներն ու չափն անգամ: Ուսումնասիրութեանս ներկայ մասին մէջ պիտի նկատենք բարեգործական ճաշերը: Նախնիք սովոր էին՝ քրիստոնէական զթասիրութեան գաղափարով, կամ առ Աստուած խոստացուած ուխտից պատճառաւ, եւ կամ ննջեցեալ հոգւոց հանգստեան համար՝ անասուններ մորթել, կամ ուրիշ նիւթերէ կերակրներ պատրաստել, հրաւիրել բազմաթիւ հաւատացեալներ, ու կերակրել: Այս հացկերոյթները կը զանազանէին իրարմէ կոչմամբ եւ հանգամանօք, որով եւ մեք առանձին առանձին պիտի քննենք զանոնք: